

ՉԵՂՉՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ԼԵՉՎԱԿԱՆ ՏՆՏԵՍՄԱՆ ՄԻՋՈՑ

Սույն հոդվածը նվիրված է գեղչման՝ որպես լեզվական տնտեսման միջոցի կարգավիճակի լուսաբանմանը ներակայված պրեդիկատիվ հարաբերություն պարունակող կառույցների համակարգում: Ուսումնասիրության արդյունքները թույլ են տալիս պնդել, որ նման տարբերակման հիմքում ընկած է կառուցվածքային և իմաստային ավարտունության չափանիշը: Մասնավորապես՝ գեղչված կառույցները ավարտուն են իմաստային առումով, մինչդեռ դրանց կառուցվածքային անավարտությունը ծառայում է որոշակի հաղորդակցական իրադրության սահմաններում տեղեկատվության խտացմանը կոնկրետ գործաբանական նպատակների համար:

Բանալի բառեր. գեղչում, լեզվական տնտեսում, ներակայված պրեդիկատիվ հարաբերություն պարունակող կառույցներ, խտացում, կառուցվածքային և իմաստային ավարտունության չափանիշ

Հայտնի փաստ է, որ միևնույն դրույթը կարող է արտահայտվել ամենատարբեր միջոցներով: Այն գոյություն ունի իր արտահայտման ձևերի ամբողջության մեջ: Այնուամենայնիվ այս բազմազանության մեջ հստակ առանձնանում են այսպես կոչված «տիպային» դրույթները, որոնք բնութագրվում են ընդհանրացված իմաստով և արտահայտման ձևական միջոցների նվազագույն կազմով: Այդօրինակ տիպային դրույթն իրենից ներկայացնում է դատողության սուբյեկտը և պրեդիկատը: Գատողության սուբյեկտն ու պրեդիկատը նշանակող բառաձևերի միջև գոյություն ունեցող կապն ընդունված է անվանել պրեդիկատիվ հարաբերություն: Վերջինիս լեզվական արտահայտման ավանդական միջոցն այնպիսի երկկազմ կառույցն է, որը պարունակում է արտակա կերպով արտահայտված սուբյեկտ և պրեդիկատ: Իսկ միակազմ, ինչպես նաև ներակայված պրեդիկատիվ հարաբերություն պարունակող երկկազմ կառույցները դիտարկվում են որպես շարահյուսական մակարդակի «ոչ տիպային», սահմանային երևույթներ: Վերջիններիս ուսումնասիրությունն ուղղակիորեն առնչվում է այնպիսի լեզվական երևույթի հետ, ինչպիսին է գեղչումը, որը հանդես է գալիս որպես շարահյուսական մակարդակում իրացվող լեզվական խտացման ամենավառ օրինակներից մեկը լեզվի բոլոր գործառական ոճերում, այդ թվում՝ գիտական խոսույթում:

Ընդհանուր իմաստով *գեղչում* եզրույթը (անգլերեն՝ *ellipsis*), որը ծագել է հունարեն *elleipsis* բառից (վերջինս նշանակում է *բացթողում, խախտում, թերություն*), համաձայն իր ստուգաբանության, նշանակում է լեզվի տարբեր մակարդակներին պատկանող միավորների տարատեսակ բացթողումներ /Морозова, 2005: 8/ [1]: Լեզվաբանական տերմինների անգլալեզու

բառարանում զեղչումը (ellipsis) սահմանվում է որպես «մի եզրույթ, որն օգտագործվում է քերականական վերլուծության մեջ՝ խոսելու այնպիսի նախադասության մասին, որի կառուցվածքի մի մասը բաց է թողնված տնտեսման, շեշտադրման կամ ոճի նկատառումներով, բայց կարող է վերականգնվել համատեքստից» /Ренц, Рыцарева, 2003: 21/: Լեզվաբանական տերմինների համառոտ բառարանում զեղչումը (эллипс) սահմանվում է որպես «ասույթի (տեքստի) որևէ տարրի բացթողում, որը կարող է հեշտությամբ վերականգնվել տվյալ խոսքային կամ իրադրային համատեքստում» /Васильева, Виноградов, Шахнарович, 2003: 174/: Համադրելով վերջին երկու սահմանումները՝ նկատում ենք զեղչման մեկնաբանության հարցում լեզվաբանական գրականության մեջ առկա մի կարևոր տարբերություն, որն առնչվում է տվյալ լեզվական երևույթի կարգավիճակին, այն է՝ արդյո՞ք այն պատկանում է նախադասության կամ, որ նույնն է, լեզվի («...խոսելու այնպիսի *նախադասության* մասին, որի...»), թե՞ ասույթի կամ, որ նույնն է, խոսքի ոլորտին («...*ասույթի* (տեքստի) որևէ տարրի բացթողում, որը...») [2]:

Այսպես՝ ընդհանուր առմամբ նախադասությունն ունի վերացական բնույթ, այսինքն՝ այն գոյություն ունի ժամանակային հարաբերություններից դուրս և բնութագրվում է քերականորեն ձևակերպված սուբյեկտ-պրեդիկատ հարաբերությամբ, մինչդեռ ասույթը դիտարկվում է որպես խոսքային իրադարձություն որոշակի ժամանակային սահմաններում, այսինքն՝ այն ստեղծվում է որևէ մեկի կողմից որոշակի ժամանակ /Реунова, 2000: 18/ կամ, որ նույնն է, որոշակի իրադրության մեջ: Այլ կերպ ասած՝ նախադասությունը լեզվի համակարգում գոյություն ունեցող պատրաստի կառույց է, որը խոսքաստեղծման գործընթացում հանդես է գալիս որպես ձևաբանական-շարահյուսական ձևակերպման որոշակի կադասար: Մյուս կողմից՝ մենք գիտենք, որ զեղչում պարունակող կառույցները պատրաստի տեսքով գոյություն չունեն լեզվի համակարգում, այլ միայն ստեղծվում են խոսքաստեղծման գործընթացում որևէ մեկի կողմից՝ տվյալ խոսքային իրադրության առանձնահատկություններով պայմանավորված և դրանց համապատասխան: Հետևաբար այս նկատառումից ելնելով՝ որոշ լեզվաբաններ հակադրվում են զեղչման ավանդական մեկնաբանությանը (այն է՝ որպես լեզվի համակարգի երևույթ)՝ փոխարենն առաջարկելով զեղչված կառույցները դիտարկել որպես խոսքի ոլորտին պատկանող միավորներ: Մասնավորապես՝ Օ.Ի. Ռեուովան նկատում է. «Կարելի է խոսել զեղչված և չզեղչված ասույթների, այլ ոչ թե զեղչված և չզեղչված նախադասությունների մասին: Լեզվի համակարգում չկան զեղչված կառույցներ, քանի որ դա հակասում է լեզվական միավորների բուն էությանը, որոնց գոյությունը ժամանակից և տարածությունից դուրս է» /Реунова, 2000: 19/: Անշուշտ, ցանկացած ասույթ հաղորդակցության գործընթացում իրացվում է նախադասության կառուցվածքի միջոցով: Սակայն եթե նախադասության համար առաջնային է կառուցվածքը սուբյեկտ-պրեդիկատ փոխհարաբերության ձևական արտահայտման (ենթակա-ստորոգյալ) տեսանկյունից, ապա ասույթը դիտարկվում է իմաստի ստեղծման և հաղորդման հնարավորության կամ անհնարիության տեսանկյունից, ասել է թե՛ այս դեպքում առաջնային են

ասույթի իմաստաստեղծիչ և իմաստագատիչ հատկությունները: Ակնհայտ է, որ զեղչված կառույցները, հանդես գալով որպես տեղեկատվության որոշակի հատվածի ներակայման միջոց, գլխավորապես ծառայում են իմաստաստեղծմանն ու իմաստագատմանը, ինչն իր հերթին արդյունավետ հաղորդակցության ապահովման գրավական է: Բացի այդ, դրանք ստեղծվում են որևէ մեկի կողմից որևէ ժամանակ՝ հաղորդակցության իրադրային առանձնահատկություններին համապատասխան: Հետևաբար զեղչված կառույցներն ունեն բոլոր այն հատկությունները, որոնք թույլ են տալիս դրանք դիտարկել ասույթի մակարդակում:

Հակառակ տեսակետի կողմնակիցները զեղչումը որպես լեզվի համակարգի երևույթ դիտարկելը հիմնավորում են այն փաստով, որ կարելի է առանձնացնել ստանդարտ իրավիճակների մի ամբողջ շարան, որտեղ սովորաբար գործածվում են զեղչված կառույցները: Նրանք զեղչված նախադասությունները դիտարկում են որպես անփոփոխ բնույթ ունեցող կառույցներ, ինչը դրսևորվում է այդ կառույցների՝ հաղորդակցության որոշակի ստանդարտ արտաքին հանգամանքներին և լեզվական ձևերին մշտապես հատուկ լինելու փաստի միջոցով /Kazaryan, 2005: 87/:

Ըստ երևույթին, տվյալ երկու մոտեցումները վերաբերում են զեղչում երևույթի երկու կողմերին, ինչը նշանակում է, որ զեղչման առավել համապարփակ և գիտականորեն հիմնավորված մեկնաբանությունը պետք է հիմնված լինի ոչ թե այս մոտեցումների՝ միմյանց հակադրման, այլ դրանց համադրման և փոխլրացման վրա: Այլ կերպ ասած՝ այստեղ խոսք է գնում զեղչման երկու տեսակների մասին: Մասնավորապես՝ առաջին դեպքում գործ ունենք իրադրային կամ համատեքստային զեղչման հետ, երբ զեղչված կառույցները խոսակիցների խոսքային գործունեության անմիջական արդյունքն են՝ պայմանավորված կոնկրետ հաղորդակցական ակտի առանձնահատկություններով և պարփակված տվյալ իրավիճակի ու ժամանակի սահմաններում: Հետևաբար իրադրային կամ համատեքստային զեղչման դեպքում մեզ համար առավել ընդունելի է *զեղչված/չզեղչված ասույթ* եզրույթը: Մինչդեռ երկրորդ դեպքում ակնհայտորեն գործ ունենք համակարգային (հարացույցային) զեղչման հետ, որը պետք է դիտարկել լեզվի համակարգի մակարդակում կամ հարացույցային հարաբերությունների տեսանկյունից: Ասվածից հետևում է, որ համակարգային զեղչման դեպքում, մենք առավել հակված ենք գործածել *զեղչված/չզեղչված նախադասություն* եզրույթը:

Չզեղչված կառույցների կարգավիճակը լեզու-խոսք երկատման տեսանկյունից հստակեցնելուց հետո տեղին է անդրադառնալ զեղչված կառույցների տեղին ու դերին այսպես կոչված «բաց թողնված» կամ «կրճատված» բաղադրիչներ պարունակող կառույցների համակարգում: Մասնավորապես՝ ելնելով մեր ուսումնասիրության առանձնահատկություններից՝ մեր խնդիրն է հստակ տարբերակում մտցնել, մի կողմից, զեղչման, մյուս կողմից՝ այնպիսի համանման լեզվական երևույթների միջև, ինչպիսին են անավարտ ասույթները և միակազմ նախադասությունները: Բանն այն է, որ վերոնշյալ երեք լեզվական երևույթները միավորվում են այն փաստի շուրջ, որ դրանցից յուրաքանչյուրն

իրենից ներկայացնում է լեզվական կամ խոսքային կառույցի այնպիսի մոդել, որին հատուկ է բազմազան լեզվական և արտալեզվական գործոնների ազդեցությամբ կառուցվածքի այս կամ այն բաղադրիչի բացթողում կամ հեռացում: Վերջինս, այն է՝ *հեռացում* կամ *էլիմինացիա* եզրույթը, որը ծագել է ֆրասերեն *elimination*՝ *վերացնել, հեռացնել* բառից, ներկայացնում է բավականին լայն մի հասկացույթ, որն ընդգրկում է լեզվական կառույցների վերոնշյալ բոլոր տեսակները, որոնց մենք կանոնադաշտնանք զեղչման՝ որպես լեզվական տնտեսման միջոցի լուսաբանման տեսանկյունից [3]:

Այսպես՝ ինչպես նշում է Լ.Գ.Կազարյանը, ժամանակակից լեզվաբանության մեջ ընդունված է այն տեսակետը, որ զեղչված և անավարտ նախադասությունները կառուցվածքի և իմաստային ավարտունության/ լիարժեքության առումով տարբեր կառույցներ են /Казарян, 2005: 83/ [4]: Դա նշանակում է, որ այս տարբերակման հիմքում ընկած է նախադասության ավարտունության/լիարժեքության չափանիշը, ընդ որում՝ այստեղ խոսքը գնում է ավարտունության/լիարժեքության երկու տարբեր հարթությունների մասին, այն է՝ 1. կառուցվածքային ավարտունություն/ լիարժեքություն և 2. իմաստային ավարտություն/ լիարժեքություն: Այսպես՝ դասական պատկերացմամբ կառուցվածքային առումով ավարտուն կամ լիարժեք կարող է համարվել այն նախադասությունը, որի կառուցվածքում արտակա կերպով ներկայացված են ինչպես սուբյեկտը (որպես նախադասության ենթակա հանդես եկող բառաձևի միջոցով), այնպես էլ պրեդիկատը (որպես նախադասության ստորոգյալ հանդես եկող բառաձևի միջոցով) [5]: Սակայն հարկ է նկատել, որ պրեդիկատիվ հարաբերությունն իր բնույթով այնքան ուժեղ շարահյուսական կապ է, որ այն գործում է անգամ այդ կապը ստեղծող երկու բաղադրիչներից որևէ մեկի լեքսիկական բացակայության ժամանակ կամ, որ նույնն է, դրանցից որևէ մեկի ներակա կերպով արտահայտված լինելու դեպքում, ինչն անշուշտ զեղչված կառույցների բնորոշ և տարբերակիչ առանձնահատկությունն է: Եվ այս դեպքում միայն մեկ բառաձևի գոյությունը նախադասության կառուցվածքում, լինի դա սուբյեկտի, թե պրեդիկատի դեր կատարողը, բավարար է, որպեսզի խոսքի հասցեատերը տվյալ բառաձևն ընկալի որպես ամբողջ ասույթի իրացում կամ ամբողջ նախադասության արտահայտություն: Դեռ ավելին, բազմաթիվ են դեպքերը, երբ զեղչված նախադասության ձևական կառուցվածքում միաժամանակ բացակայում են երկու գլխավոր անդամն էլ, սակայն դրանից հաղորդակցությունն ամենևին չի տուժում, քանի որ խոսքի հասցեատերն այդպիսի նախադասությամբ իրացված ասույթն ընկալում է հենց այնպիսին, ինչպիսին որ վերջինիս ընկալումը ենթադրելի և կանխատեսելի էր խոսքը հասցեագրողի կողմից: Նշանակում է՝ տվյալ դեպքում անավարտությունը կամ ոչ լիարժեքությունը վերաբերում է միայն նախադասության կառուցվածքին, մինչդեռ իմաստային առումով վերջինս միանգամայն լիարժեք և ավարտուն է, քանի որ ներակայված պրեդիկատիվ հարաբերությունն այս դեպքում վերականգնվում է նախորդող կամ հաջորդող հարատեքստի, ինչպես նաև խոսքային իրադրության շնորհիվ: Օրինակ՝

- (1) On the one hand, there is the culture of the local courthouse, the working norms of different social and interest groups and professional associations, the networks of individuals involved in pursuing, avoiding, or mediating disputes; on the other, international institutions and regulators and the so-called “third cultures” of international trade, communication networks, and other transnational processes /Nelken D. Thinking About Legal Culture // *Asian Journal of Law and Society* // available at: http://journals.cambridge.org/abstract_S20529015140_00151, p. 12/.

Գիտական հոդվածի տեքստից վերցված այս օրինակը, որը կառուցվածքի առումով իրենից ներկայացնում է բարդ համադասական նախադասություն, հրաշալի կերպով ցուցադրում է, թե ինչպես է նախադասության գեղչված ստորոգյալը կամ ներակայված պրեդիկատը վերականգնվում նախորդող հարատեքստի շնորհիվ: Մասնավորապես՝ համեմատության՝ համադաս նախադասություններով արտահայտված երկու բևեռների միջև հակադրությունն ավելի ակնառու դարձնելու, շեշտադրելու նպատակով (հեղինակի նպատակն այստեղ ներքին, տեղական իրավական մշակույթի (“...the culture of the local courthouse, the working norms of different social and interest groups and professional associations...”) և միջազգային ասպարեզում տիրող իրավիճակի (“...international institutions and regulators and the so-called “third cultures” of international trade...”) միջև առկա հակասությունների փաստը ցուցադրելն է) հեղինակը նախընտրում է չկրկնել, բաց թողնել երկրորդ համադաս նախադասության (“...on the other...”) ստորոգյալը՝ որպես տվյալ ասույթի տեղեկատվական կառուցվածքում արդեն հայտնի բաղադրիչ՝ թեմա, որպեսզի ընթերցողի ուշադրությունն ամբողջությամբ հրավիրի ասույթի տեղեկատվական կառուցվածքում նոր բաղադրիչի՝ ռեմայի վրա՝ դրանով համեմատությունն առավել ազդեցիկ և արդյունավետ դարձնելով: Իսկ ընթերցողը բավականին հեշտ կերպով, կարելի է ասել, նույնիսկ ենթագիտակցաբար առաջին համադաս նախադասության (“On the one hand, there is...”) կառուցվածքից, որտեղ պրեդիկատն ունի արտակա արտահայտություն *there is* բառաձևով ներկայացված ստորոգյալի տեսքով, վերականգնում է երկրորդ համադաս նախադասության պրեդիկատը, որը ներակայված չլինելու դեպքում պետք է ներկայացված լիներ *there are** բառաձևով: Սրան մեծապես նպաստում է նաև *on the one hand...on the other* շաղկապի գործածությունը, որն ինքնին իր իմաստային կառուցվածքով ենթադրում է համեմատություն, հակադրություն: Հարատեքստի նման իմացությունն էլ թույլ է տալիս ընթերցողին հաջողությամբ վերականգնել հաղորդման բաց թողնված տարրերը և համարժեք կերպով ընկալել հեղինակի մտադրությունը: Այսպիսով՝ գեղչումը՝ որպես լեզվական տնտեսման միջոց, այստեղ միաժամանակ ծառայում է սերտորեն փոխկապված երեք նպատակի. առաջին՝ թույլ է տալիս խուսափել կրկնությունից, երկրորդ՝ դրա արդյունքում հնարավորություն է տալիս ընթերցողի ուշադրության կենտրոնում պահել տեղեկատվության նոր հատվածը, երրորդ՝ որպես վերջնարդյունք՝ ունենում ենք ձևական կառուցվածքի առումով հնարավորինս

սեղմ և միևնույն ժամանակ իմաստային առումով հազեցած տեքստ, որը, մի կողմից, թույլ է տալիս տնտեսել տպագրական տարածքը, մյուս կողմից, ապահովում է առավել արդյունավետ փոխըմբռնում, հետևաբար և արդյունավետ հաղորդակցություն խոսակիցների միջև:

- (2) Update – ethics ‘just in time’: renew and update the deliberations and decisions. Choose the right time for the debate of a special issue, not too early and not too late /Faber B.A. Assisted Reproduction, the Law and Public Attitudes: A Danish Perspective // *European Review*, 2013, 21, available at http://journals.cambridge.org/abstract_S1062798713000100, p. 6/.

Երկրորդ օրինակում, որը նույնպես վերցված է գիտական հոդվածից, ներակայված են ինչպես սուբյեկտը, այնպես էլ պրեդիկատը (“...not too early and not too late”), սակայն անմիջապես նախորդող տեքստից (“Choose the right time for the debate of a special issue...”) ընթերցողի համար պարզ է, որ խոսքը վերաբերում է որևէ խնդրի քննարկման համար ճիշտ ժամանակ ընտրելուն: Հետևաբար հենվելով նախորդող հարատեքստի իմացության վրա՝ ընթերցողը մտովի վերականգնում է տվյալ դրույթի սուբյեկտն ու պրեդիկատը կամ, որ նույնն է, պրեդիկատիվ հարաբերությունը (“*You/one should arrange the debate neither too early nor too late*”*)): Եթե հարցին մոտենանք հակառակ, այն է՝ խոսքը հասցեագրողի՝ հեղինակի տեսանկյունից, ապա վերջինս նույնպես պրեդիկատիվ հարաբերությունը ներակայելիս հենվում է նախորդող տեքստում ամփոփված տեղեկությունների վրա: Մասնավորապես՝ վստահ լինելով, որ ընթերցողը նախորդող հարատեքստից կվերականգնի ներակայված սուբյեկտն ու պրեդիկատը և համարժեք կերպով կընկալի հաղորդումը՝ հեղինակը դիմում է տեղեկատվության խտացմանը՝ նպատակ ունենալով շեշտադրել, հաղորդման մնացած հատվածից առանձնացնել բովանդակային առումով այդքան կարևոր տեղեկատվությունը: Այլ կերպ ասած՝ ասես ասույթի երկրորդ՝ զեղչում պարունակող հատվածում, հեղինակը բացում է փակագծերը, այն է՝ բացատրում է, թե ինչ նկատի ունի ինքը՝ քննարկման «ճիշտ» ժամանակ ասելով: Եվ քանի որ նրա համար առաջնային, առավել կարևոր է այս հարցի պատասխանը, վերջին հաշվով տվյալ հաղորդման նպատակն այս հարցի պատասխանը տալն է, հեղինակը նախընտրում է գերծ մնալ դրանից բացի որևէ այլ կարգի տեղեկություն հաղորդելուց, հետևաբար արտակա կերպով արտահայտում է միայն նոր տեղեկությունը՝ բաց թողնելով, նախորդող հարատեքստի միջոցով ներակայելով հին, հայտնի տեղեկությունը: Տվյալ դեպքում զեղչման միջոցով իրացվող լեզվական խտացումը, բացի նոր տեղեկության շեշտադրումից, ընդգծումից, առանձնացումից, այլ նպատակ էլ է հետապնդում, այն է՝ հատուկ ոճական երանգավորում է հաղորդում խոսքին՝ այն դարձնելով ավելի համոզիչ և ազդեցիկ:

- (3) 2:47 That second red line is religion. But now religion and politics are connected, with the rise of such groups as the Muslim Brotherhood. And

some people, at least, are starting to ask questions about the role of Islam in public and private life.

3:05 You know, as for that third red line, that off-limits subject, what do you think it might be?

3:11 Audience: Sex.

3:12 Shereen El Feki: Louder, I can't hear you.

3:13 Audience: Sex.

3:14 SEF: Again, please don't be shy.

3:16 Audience: Sex. /El Feki Sh. A little-told tale of sex and sensuality // TED Global 2013 filmed June 2013 16:10, available at: https://www.ted.com/talks/shereen_elfeki_a_little_told_tale_of_sex_and_sensuality/transcript?language=en/

Ի տարբերություն նախորդ երկու օրինակների, որտեղ պրեդիկատիվ հարաբերության վերականգնումը և հաղորդման համարժեք ընկալումը խոսքի հասցեատիրոջ կողմից տեղի էր ունենում զեղչված ասույթին անմիջապես շրջապատող լեզվական հարատեքստի շնորհիվ, երկրորդ օրինակը, որը վերցված է բանավոր խոսքից, մասնավորապես՝ գիտական ելույթից, ցույց է տալիս, թե ինչպես է զեղչված ասույթի պրեդիկատիվ հարաբերության վերականգնմանը և համարժեք ընկալմանը նպաստում խոսքային իրադրությունը [6]: Այսպես՝ մեր կողմից առանձնացված հատվածում ելույթ ունեցողը խոսում է խայտաբղետ արաբական մշակույթը միավորող երեք ընդհանուր «կարմիր գծերից»՝ քաղաքականություն, կրոն և սեռականություն, որի մասին արաբական մշակույթում արմատացած պատկերացումները ելույթի բուն թեման են: Այսպիսով՝ ելույթ ունեցողը քաղաքականությանն ու կրոնին մի քանի խոսքով անդրադառնալուց հետո փորձում է հող նախապատրաստել բուն թեմային անցնելու համար և, որպես հռետորական հնարք, կիրառում է հարց ու պատասխանի մեթոդը՝ անմիջապես դիմելով հանդիսատեսին, վերջինիս հետ երկխոսության մեջ մտնելով: Ելույթ ունեցողն առաջին անգամ հարցով դիմում է հանդիսատեսին, ինչից հետո դահլիճից լսվում է բավականին ցածր և ոչ այնքան հասկանալի ձայնով պատասխան (3:05 SEF “...what do you think it might be?” - 3:11 Audience: “Sex.”): Դրանից հետո ելույթ ունեցողը մի քայլ մոտենում է հանդիսատեսին, ձեռքը մոտեցնում ականջին և համապատասխան հնչերանգով ասում՝ *Louder, I can't hear you*, ինչին երկրորդ անգամ է հաջորդում նույն պատասխանը՝ *Sex*: Ինչպես տեսնում ենք, չնայած ելույթ ունեցողը արտակա կերպով խնդրանք չի արտահայտում՝ պատասխանը ավելի բարձր ձայնով կրկնելու մասին, ընդամենը մեկ բառ է օգտագործում՝ *Louder*, բայց այն իրադրության գիտակցման շնորհիվ, որում տեղի է ունենում հաղորդակցությունը, այսինքն՝ գիտակցելով, որ երկխոսություն է տեղի ունենում, հետևաբար և երկխոսության կանոններին համապատասխան՝ խոսակիցը դիմում է իրենց՝ ակնկալելով համարժեք արձագանք, ինչպես նաև հաշվի առնելով ելույթ ունեցողի շարժումները, ժեստերը, դիմախաղը և հնչերանգը՝ դահլիճում գտնվողները վերականգնում են զեղչված պրեդիկատիվ կապը, այն է՝ *Speak*

*louder, I ask you to speak louder**, և համարժեք արձագանքում: Ներակայված հատվածի վերականգնմանը նպաստում է նաև հաջորդող հարատեքստը, որն այս դեպքում բացատրության դեր է կատարում՝ *I can't hear you*: Դրանից հետո ելույթ ունեցողը երրորդ անգամ է խնդրում կրկնել պատասխանը՝ կրկին խուսափելով չգեղչված ասույթով դիմելուց (SEF: “Again, please don't be shy.”), որպեսզի խոսքը լինի արագ և դինամիկ՝ հանդիսատեսին չհոգնեցնելու, ինչպես նաև վերջինիս ուշադրությունը պահելու համար: Դահլիճը ճիշտ նույն տրամաբանությամբ երրորդ անգամ է կրկնում պատասխանը:

Այսպիսով՝ քննարկված օրինակներն ապացուցում են, որ գեղչված ասույթների դեպքում անավարտություն ասվածը հարաբերական է, քանի որ վերաբերում է միայն նախադասության ձևական կառուցվածքին, որով տվյալ ասույթն իրացվում է խոսքում, մինչդեռ իմաստային առումով գեղչված ասույթները միանգամայն ավարտուն և ամբողջական են: Դեռ ավելին՝ անգամ կառուցվածքային անավարտությունը յուրաքանչյուր իրավիճակում ծառայում է որևէ կոնկրետ նպատակի՝ իրականացնելով այս կամ այն գործառույթ: Ասվածից հետևում է, որ կարող ենք վստահաբար պնդել, որ գեղչված կառույցները միանգամայն տարբեր են բուն անավարտ ասույթներից: Որպեսզի տերմինաբանական շփոթմունք չառաջանա, պարզաբանենք նաև այն հարցը, թե կոնկրետ ինչպիսի ասույթներն ենք նպատակահարմար համարում անվանել *անավարտ* սույն ուսումնասիրության շրջանակներում:

Այսպես՝ ինչպես արդեն նշել ենք, ասույթը, որպես կանոն, դիտարկվում է իմաստի ստեղծման և հաղորդման հնարավորության կամ անհնարինության տեսանկյունից: Հետևաբար ասույթները կարող են լինել իմաստ պարունակող և անիմաստ: Վերջիններիս շարքում առանձնանում են այն ասույթները, որոնք այս կամ այն «աղմուկի» ազդեցության արդյունքում որևէ տեղեկատվություն չեն հաղորդում: «Աղմուկ» ասվածի տակ այս դեպքում կարելի է հասկանալ տարատեսակ հանգամանքների ազդեցությամբ խոսքային հոսքի ընդհատումը, ինչպես նաև խոսքային կամ մտավոր գործունեության անհամապատասխանությունը /Реунова, 2000: 20/: Ասվածը լուսաբանելու նպատակով բերենք հետևյալ օրինակը Ն. Խոմսկու՝ Մասաչուսեթսի համալսարանում կարդացած դասախոսությունից.

Years later, McGeorge Bundy, who was the national security adviser for Kennedy and Johnson, in retrospect, he pointed out that it probably would have been a good idea to end the Vietnam War at that point, to pull out. Contrary to a lot of illusions, the Vietnam War was fought primarily to ensure that an independent Vietnam would not develop successfully and become a model for other countries in the region. It would not – to borrow Henry Kissinger's terminology speaking about Chile, we have to prevent what they called the – what he called the "virus" of independent development from spreading contagion elsewhere. That's a critical part of American foreign policy since the Second World War – Britain, France, others to a lesser degree. And by 1965, that was over. Vietnam was – South Vietnam was virtually destroyed. Word spread to the rest of Indochina it wasn't going to be a

model for anyone, and the contagion was contained. There were – the Suharto regime made sure that Indonesia wouldn't be infected. /Chomsky N. Who Owns the World // delivered at University of Massachusetts at Amherst, September 2012, available at: <http://www.youtube.com/watch?v=8C5Nd0loODI>; <http://www.youtube.com/watch?v=kWWbXXEyxDU/>

Տվյալ դեպքում խոսքային հոսքն ընդհատող «աղմուկի» դերում հանդես է գալիս այն փաստը, որ խոսողը հաճախ ասում է մի բան, այնուհետև կանգ է առնում ինքն իրեն ուղղելու, շտկելու նպատակով՝ անավարտ թողնելով հնչեցրած ասույթը: Այս երևույթը հասկանալի պատճառով հատուկ է բանավոր խոսքին, քանի որ եթե գրավոր խոսքը կառուցելիս հեղինակն ունի անհրաժեշտ ժամանակը խոսքը մանրամասն պլանավորելու համար կամ ուղղելու անհրաժեշտության դեպքում կարող է ջնջել, նորից գրել՝ ընթերցողին մատուցելով վերջնական, անթերի տարբերակը, ապա կենդանի հնչող խոսքը ժամանակային առումով այդ հնարավորությունը չի ընձեռում: Ինչպես ասում են. «Բերանիցդ թռած խոսքը հրեղեն ձիով էլ չես բռնի»: Այսպիսով՝ *It would not, what they called the, Vietnam was, There were* իմաստային առումով անավարտ ասույթներ են, որոնք որևէ իմաստ չեն պարունակում, հետևաբար և տեղեկատվական առումով որևէ արժեք չեն ներկայացնում՝ ի տարբերություն զեղչված կառույցների, որոնք, չնայած կառուցվածքային առումով անավարտ են, բայց այդ անավարտությունը ծառայում է տեղեկատվության խտացմանը՝ տեքստի տեղեկատվական կառուցվածքում նոր բաղադրիչի ընդգծման նպատակով: Այսպիսով՝ մենք նպատակահարմար ենք գտնում *անավարտ ասույթ* եզրույթը գործածել իմաստային անավարտությամբ բնութագրվող կառույցների մասին խոսելիս, որոնք, քանի որ տեղեկատվություն չեն հաղորդում, չեն էլ կարող հանդես գալ որպես տեղեկատվության խտացման միջոց:

Այժմ անդրադառնանք զեղչված կառույցների և միակազմ նախադասությունների տարբերակման խնդրին: Այս դեպքում նույնպես որպես տարբերակման հիմք ծառայում է տվյալ կառույցների կառուցվածքային և իմաստային ավարտունության հատկանիշը: Այսպես՝ ինչպես արդեն նշել ենք, զեղչված կառույցների բնորոշ առանձնահատկությունն այն է, որ, չնայած կառուցվածքային անավարտությանը, իմաստային առումով դրանք միանգամայն ավարտուն և լիարժեք են: Պարզապես վերջիններիս համարժեք ընկալման համար պահանջվում է ձևականորեն չարտահայտված, ներակայված բաղադրիչների վերականգնում: Ի տարբերություն զեղչված կառույցների՝ միակազմ նախադասությունների դեպքում ոչ միայն չի պահանջվում որևէ բաղադրիչի վերականգնում, այլև նման հնարավոր վերականգնումը կարող է նույնիսկ աղավաղել կառույցի իմաստային կառուցվածքը /Казарян, 2005: 85/: Այլ կերպ ասած՝ հանգում ենք գրոյական նշան/զեղչում հակադրությանը, որի լույսի ներքո պետք է փնտրել միակազմ նախադասությունների և զեղչված կառույցների տարբերությունը: *Չրոյական նշան* և *զեղչում* հասկացությունների տարբերակման անհրաժեշտության մասին առաջին անգամ խոսել է Շ. Բալին 1955 թվականին: Նրա կողմից գրոյական նշանը սահմանվում է որպես շարույթի որոշակի հատվածում

հանդես եկող մի նշան, որը, չնայած չունի նշանակիչ, բայց ունի որոշակի նշանակություն /Kazaryan, 2005: 85-86/: Ձրոյական նշանը գեղչումից տարբերվում է նրանով, որ վերջինս հանդես է գալիս որպես խոսքի միավոր, մինչդեռ զրոյական նշանը լեզվի միավոր է: Այլ կերպ ասած՝ վերջինս պարտադիր բնույթ է կրում, ինչը նշանակում է, որ այն բացառում է արտակա կերպով արտահայտված որևէ հնչյունային կամ գրային տարրով փոխարինման հնարավորությունն առանց ասույթի կամ նախադասության իմաստային կառուցվածքի փոփոխության: Մյուս կողմից՝ ենթադրվող նշանը կամ, որ նույնն է, գեղչումը ենթադրում է առնվազն երկու հոմանիշ կառույցների գոյություն, հետևաբար և՛ խոսքը հասցեագրողի համար ընտրության հնարավորություն [7]: Նշանակում է՝ միակազմ նախադասությունների դեպքում չենք կարող խոսել խտացման մասին, քանի որ դրանք լեզվում գոյություն ունեն հենց այդ տեսքով՝ որպես լեզվի համակարգում արմատացած միավորներ, լեզվի համակարգի փաստեր՝ պայմանավորված տվյալ լեզվի քերականական կառուցվածքով: Այլ կերպ ասած՝ դրանք խոսքը հասցեագրողին ընտրության հնարավորություն չեն տալիս, վերջինս հնարավորություն չունի հնարավոր գուգահեռ, հոմանիշ ձևերից ընտրելու տվյալ հաղորդակցական ակտի պայմաններում առավել հարմարը և արդյունավետը: Այս դեպքում խոսքը հասցեագրողը ոչ թե կիրառում է տեղեկատվության խտացման, սեղմման միջոցներ, այլ պարզապես օգտվում է լեզվի անփոխարինելի կառույցից, այն կառույցից, որից բացի, ուրիշ բան տվյալ իրավիճակում չի կարող գործածել: Եթե անգամ միակազմ նախադասություններում տեղեկատվական խտացման նշույլներ նկատվում են էլ, ապա դա արտալեզվական մակարդակի խտացում է, այն է՝ կրում է խոսքը հասցեագրողի կողմից խոսքին հուգական երանգավորում հաղորդելու կամ նկարագրության պատկերավորությունն ապահովելու բնույթ՝ որոշակի ոճական նկատառումներից ելնելով [8]:

Այսպիսով՝ ամփոփելով կարող ենք պնդել, որ գեղչված կառույցները, բուն անավարտ ասույթները և միակազմ նախադասությունները միանգամայն տարբեր կազմություններ են, որոնց տարբերակման հիմքում ընկած է կառուցվածքային և իմաստային ավարտունության հատկանիշը, մասնավորապես՝

- ա. գեղչված կառույցները անավարտ են կառուցվածքի տեսակետից և ավարտուն՝ իմաստային առումով,
- բ. բուն անավարտ ասույթները բնութագրվում են ինչպես կառուցվածքային, այնպես էլ իմաստային անավարտությամբ,
- գ. միակազմ նախադասություններն ինչպես կառուցվածքի, այնպես էլ իմաստային առումով ավարտուն են:

Այսպիսով՝ ամփոփելով կարող ենք նշել՝

1. Ձեղչումը, որը լեզվական կառույցի որևէ կառուցվածքայնորեն անհրաժեշտ տարրի ներակայումն է, որպես շարահյուսական գործընթաց, հիմնված է հարատեքստի և խոսքային իրադրության պարտադիր առկայության վրա, որը հանդես է գալիս որպես գեղչման անհրաժեշտ պայման, քանի որ հարատեքստում և խոսքային իրադրությունում է գործածվում այն շարահյուսական տարրը, որը ներակայված է տվյալ ասույթում կամ նախադասության մեջ [9]:

2. Ձեռնարկը բնորոշ է երկու գլխավոր գործառույթ՝ իմաստաստեղծման և իմաստագատման: Հանդես գալով որոշակի հաղորդակցական իրադրության շրջանակներում՝ զեղչված կառույցները՝ որպես տեքստային տարրեր, ստանում են հատուկ նշանակություն և իրականացնում որոշակի հաղորդակցական-գործաբանական գործառույթներ: Այս հանգամանքը թույլ է տալիս դիտարկել զեղչումը որպես շարահյուսական գործառույթ, որը մասնակցում է տեքստի տեղեկատվականության ստեղծմանը:

3. Անգլերենում զեղչված կառույցներն ունեն մեծ գործաբանական ներուժ, ինչը նշանակում է, որ որոշակի հաղորդակցական իրադրությունում խոսակիցները գիտակցաբար ընտրություն են կատարում հոգուտ զեղչված կառույցների՝ որոշակի գործաբանական նպատակներ իրականացնելու համար:

Ծանոթագրություններ

1. Ինչպես նշում է Լ.Գ.Կազարյանը, ավանդական *զեղչում* եզրույթը, որը լայն իմաստով կարող է դիտարկվել որպես *էլիմինացիա/հեռացում (элиминация)* և *անավարտություն (неполнота)* եզրույթներին հոմանիշ բառ, քանի որ երեքն էլ օգտագործվում են «բաց թողնված» կամ «կրճատված» բաղադրիչներ պարունակող նախադասությունների մոդելների մասին խոսելիս, առավել լայն և վաղեմի գործածություն ունի լեզվաբանական գրականության մեջ: Այն հատկապես բնորոշ է ոճագիտությանը, որտեղ հանդես է գալիս որպես «շարահյուսական փոխաբերություն» պլեոնազմի (ավելորդաբանության) հետ միասին՝ կազմելով «պատկերավոր շարահյուսության» մի մասը: Վերոնշյալ մյուս երկու եզրույթները, այն է՝ *էլիմինացիա/հեռացում (элиминация)* և *անավարտություն (неполнота)*, առաջ են եկել շատ ավելի ուշ՝ զեղչման լեզվաբանական վերլուծության արդյունքում /Казарян, 2005:82-82/:

2. Լ.Գ.Կազարյանը նկատում է, որ զեղչման մեկնաբանությունը «լեզու-խոսք» երկատման լույսի ներքո, որը հանդիպում է 20-րդ դարի 50-60-ական թվականների լեզվաբանների աշխատություններում, սկիզբ է դրել զեղչման երևույթի սահմանման հարցում երկու տարբեր մոտեցումներին, որոնք են՝ ա. զեղչում պարունակող կազմությունները դիտարկել որպես լեզվի համակարգում գոյություն ունեցող ինքնատիպ կառույցներ, բ. դրանք դիտարկել որպես մարդու խոսքային գործունեության անմիջական արդյունք /Казарян, 2005:86/:

3. Էլիմինացիան (elimination) առաջին անգամ ուսումնասիրվել է ֆրանսիացի լեզվաբանների, առաջին հերթին՝ Շ.Բալիի և Ռ.Գոդելի կողմից որպես փոխակերպական մեթոդի հնարքներից մեկը /Казарян, 2005:83/: Հետագայում, այնուամենայնիվ, էլիմինացիան աստիճանաբար դառնում է լեզվաբանական հասկացույթ: Վերջինս չի կարելի նույնացնել *զեղչում* հասկացույթի հետ. զեղչումն իրականում էլիմինացիայի տեսակներից մեկն է:

4. Օ.Վ.Գոֆմանը նկատում է, որ լեզվաբանական գրականության մեջ *անավարտ նախադասություն* և *զեղչված նախադասություն* եզրույթները

հաճախ օգտագործվում են որպես հոմանիշներ, սակայն իրականում դրանք լեզվի միանգամայն տարբեր փաստեր են /Годман, 2006:13/):

5. Ակնհայտ է, որ տվյալ դեպքում խոսքը զեղչում չպարունակող երկկազմ նախադասության մասին է:

6. Ինչպես նկատում է Լ. Ա. Նեֆյոդովան, երբ հաղորդակցական միավորի իմաստի ձևավորման հարցում որպես որոշիչ գործոն հանդես է գալիս իրադրությունը, գործ ունենք զեղչված ասույթների իրադրային տեսակի հետ: Վերջինիս տարատեսակների սահմանման հարցում մենք հենվում ենք այնպիսի իրադրային երևույթների վրա, ինչպիսին են խոսքի պահին խոսակիցներին շրջապատող առարկաները և խոսակիցների տարատեսակ շարժումներն ու ցուցումները, ինչպես նաև երկու տիպի իրադրությունների տարբերակումը, այն է՝ տիպային և խոսքում ազատ կերպով ստեղծվող: Ելնելով վերոնշյալից՝ տարբերակում ենք իրադրային զեղչման հետևյալ տեսակները՝ ա) զեղչված ասույթներ, որոնց իմաստը ձևավորվում է հաղորդակցության ակտի մասնակիցների տեսադաշտում գտնվող խոսքի առարկայի առկայության հաշվին, բ) զեղչված ասույթներ, որոնց իմաստը ձևավորվում է հաղորդակցության ակտի մասնակիցների հարալեզվական հատկանիշների (ժեստեր, դիմախաղ) ազդեցությամբ, գ) զեղչված ասույթներ, որոնց իմաստը ձևավորվում է տիպային իրադրության ազդեցությամբ /Нефедова, 1983:11-12/:

7. Ասվածի լավագույն լուսաբանումը տվել է Ն.Գ.Արուտյունովան՝ բերելով ռուսերենի *У нее седые волосы – У нее есть седые волосы* հայտնի օրինակը /Арутюнова 1976: 279/: Առաջին՝ միակազմ նախադասության իմաստային կառուցվածքը միանգամայն տարբեր է երկրորդ՝ երկկազմ նախադասության իմաստային կառուցվածքից: Բանն այն է, որ առաջինը նշանակում է, որ սուբյեկտն արեհեր է, մինչդեռ երկկազմ նախադասության կառուցվածքում առկա ստորոգյալն արդեն փոխում է նախադասության իմաստը, այսինքն՝ երկրորդ նախադասությունից խոսքի հասցեատերը հասկանում է, որ ոչ թե սուբյեկտն արեհեր է, այլ վերջինիս մազերի մի մասը սպիտակած են, ունի սպիտակած մազեր: Հետևաբար տվյալ դեպքում «զեղչված» ստորոգյալի մասին խոսք գնալ չի կարող, քանի որ նախադասության ինչպես ձևական, այնպես էլ իմաստային կառուցվածքն ինքն իրենով ամբողջական և ավարտուն է և որևէ վերականգնման կարիք չի գգում: Ավելին՝ այսպես կոչված «վերականգնումը» տվյալ դեպքում փոխում է կառույցի իմաստը:

8. Հենց այս հանգամանքով է պայմանավորված այն փաստը, որ մեր կողմից դիտարկված 122 էջ (1 էջը՝ 1800 սիմվոլ հաշվարկով) գիտական հոդվածներում և դասախոսությունների ու բանավոր ելույթների տրանսկրիպտներում միակազմ նախադասության որևէ օրինակ չի հայտնաբերվել:

9. Ինչպես նշում է Լ.Ա.Նեֆյոդովան, ամենից հաճախ այն գործոնի դերում, առանց որի չի կարող ձևավորվել զեղչված ասույթի իմաստը, հանդես է գալիս համատեքստային/հարատեքստային պայմանավորվածությունը, այսինքն՝ ասույթների միջև իմաստային կապերը /Нефедова, 1983: 8/:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Арутюнова Н.Д. Предложение и его смысл. Москва: Наука, 1976.
2. Васильева Н.В., Виноградов В.А., Шахнарович А.М. Краткий словарь лингвистических терминов. Москва: Издательство «Русский язык», 2003.
3. Гофман О.В. Односоставные предложения в русском, английском и немецком языках в сопоставительном аспекте. Уфа, 2006.
4. Казарян Л.Г. Типология предложений с элиминированной формой выражения предикативного отношения на материале немецкого языка. Тамбов: Издательство ТГУ, 2005.
5. Морозова Е.И. Структурно-функциональные типы и прагматические характеристики эллипсиса в французском языке в сопоставлении с английским (на материале газетно-журнальных публикаций). Екатеринбург, 2005.
6. Нефедова Л.А. Эллипсис в акте коммуникации. Москва, 1983.
7. Ренц Т.Г., Рыцарева А.Э. Словарь лингвистических терминов на английском языке. Волгоград: Издательство ВолГУ, 2003.
8. Реунова О.И. Эллипсис как лингвистическое явление (на материале английского языка). Пятигорск, 2000.
9. Faber В.А. Assisted Reproduction, the Law and Public Attitudes: A Danish Perspective // *European Review*, 2013, 21, available at http://journals.cambridge.org/abstract_S1062798713000100
10. Nelken D. Thinking About Legal Culture // *Asian Journal of Law and Society*, available at: http://journals.cambridge.org/abstract_S2052901514000151
11. Chomsky N. Who Owns the World // lecture delivered at University of Massachusetts at Amherst, September 2012, available at: <http://www.youtube.com/watch?v=8C5Nd0loODI>;
<http://www.youtube.com/watch?v=kWWbXXEyxDU>
12. El Feki Sh. A little-told tale of sex and sensuality // TED Global 2013 Filmed June 2013 16:10, available at: https://www.ted.com/talks/shereen_el_feki_a_little_told_tale_of_sex_and_sensuality/transcript?language=en

А.ЧУБАРЯН, Л. САРГСЯН – Эллипсис как средство языковой экономии. –

Данная статья посвящена вопросу о статусе эллипсиса как способа реализации языковой экономии в системе конструкций с имплицитно выраженным предикативным отношением. В результате исследования выявлено, что в основе данного разграничения лежит структурно-семантический критерий полноты. В частности, эллиптические конструкции являются полными в плане семантической завершенности, а структурная неполнота служит способом компрессии

информации в рамках определенной коммуникативной ситуации для достижения определенных прагматических целей.

Ключевые слова: эллипсис, языковая экономия, конструкции с имплицитно выраженным предикативным отношением, компрессия, структурно-семантический критерий полноты

A.CHUBARYAN, L.SARGSYAN – *Ellipsis as a Means of Linguistic Economy.* – The aim of the given paper is to define the status of ellipsis as a means of economy principle realization in the system of constructions with implicit predication. The results of the study enable us to claim that the above-mentioned distinction is based on the criterion of structural and semantic completeness. Namely, elliptical constructions are complete semantically, whereas their structural incompleteness functions as a means of compressing the information within the limits of a given communicative situation for the purpose of achieving certain pragmatic goals.

Key words: ellipsis, linguistic economy, constructions with implicit predication, compression, criterion of structural and semantic completeness